

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԻՔԵԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ (1919 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1920 Թ. ԱՊՐԻԼ)

ՅՈՒՐԻԿ ՂՈՒՅԱՆ

Անդրկովկասի թուրքական զինագրավման պայմաններում, երբ Աղրբեջանի հայությունը կանգնած էր կոտորածի ու ցեղասպանության ենթարկվելու ամենօրյա վտանգի առջև, իշխանության մարմիններում նրա մասնակցության մասին խոսք անգամ չիմեղ չէր կարող: Աղրբեջանի հայ բնակչությունը հստակ գիտակցում էր, որ թուրքական բարբարոսությունների լծի տակ պառլամենտական ժողովրդավարական աշխատանքը ոչ միայն անհնար է, այլև անիմաստ: Եվ դա էր պատճառը, որ հայերը բացասաբար էին վերաբերվում Աղրբեջանի թուրք-բեկական ֆեոդալական հանրապետությանն ու նրա պառլամենտին:

Հայերի դրությունն Աղրբեջանում մասամբ բարելավվեց 1918 թ. նոյեմբերին՝ դաշնակիցների գալուց հետո: Դաշնակիցների հրամանատար գեներալ Թոմսոնի նախաձեռնությամբ Բաքվի Հայոց ազգային խորհրդի հետ աղրբեջանական իշխանությունների տևական բանակցություններից հետո հայերը մտան Աղրբեջանի բարձրագույն մարմիններ: Մուտք գործելով Աղրբեջանի պառլամենտ փետրվարի 25-ին՝ հայկական ֆրակցիան հրապարակեց իր հռչակագիրը, որում մասնավորապես ողջունելով թաթար ժողովրդի ինքնորոշումը՝ հույս հայտնեց, որ Աղրբեջանը կդառնա իրավահավասար ժողովրդավարական հանրապետություն: Հռչակագրում անդրադարձ կար երկու հանրապետությունների միջև առկա վիճելի սահմանային խնդիրներին, որոնց կարգավորումը հայկական ֆրակցիան տեսնում էր միայն խաղաղ ճանապարհով: Կանգնած լինելով հայ բնակչության ու ազգային շահերի պաշտպանության դիրքերում՝ հռչակագիրը դրսևորեց Ղարաբաղի հայ բնակչության իրավունքների պաշտպանության հարցում հայկական ֆրակցիայի հստակ դիրքորոշումը: Ըստ «Մշակ»-ի 1919 թ. փետրվարի 26-ի հաղորդագրության՝ հայերը պառլամենտում ունեցան 9 տեղ: Բաքվի հայությունը պառլամենտում ներկայացված էր 5 անդամով, որից 3-ը՝ չափավոր հոսանքի կողմից (Ստ. Թաղիանոսյան, Արշ. Պարոնյան, Եր. Թաղիանոսյան), իսկ 2-ը՝ դաշնակցական (Պ. Չուբար և Ս. Մելիք-Յուլյան): Գանձակ քաղաքն իր շրջակա գյուղերով տվեց 4 պատգամավոր, որոնցից 2-ը՝ դաշնակցական (Ա. Մալխասյան և Խ. Համասփյուռ), մեկը՝ սոցիալիստ-հեղափոխական (Տեր-Իսրայելյան), և մեկը՝ չափավոր (Ի. Խոջոյան)¹: 1919 թ. մարտի 1-ի դրությամբ հայ ներկայացուցիչները Աղրբեջանի պառլամենտում դեռևս 7-ն էին. 2-ը՝ Գանձակից, 5-ը՝ Բաքվի Հայոց ազգային

¹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, 26 փետրվարի:

խորհրդից²: Շուտով հայ պատգամավորների թիվը համալրվեց ևս մեկով՝ հանձին Բոգդան Բալայանի, որը Նուխու Չայոց ազգային խորհրդում պառլամենտի անդամ ընտրվեց Նուխու և Արեշի գավառների հայ բնակչության կողմից³: Ժամանակի ընթացքում Ադրբեջանի պառլամենտի հայ անդամների կազմը համալրվեց: Այսպես, Յր. Աբրահամյանը, «Մարտնչող Արցախը» աշխատության մեջ անդրադառնալով 1919 թ. հունիսի սկզբներին Ղայբալի-շեն հայկական գյուղի կործանման ու Ղարաբաղի դեպքերը քննող պառլամենտական հանձնաժողովի գործունեությանը, նշում է, որ Ադրբեջանի խորհրդարանի 53 պատգամավորներից 8-ը հայ էին՝ Խորեն Չամասփյուռ, Արշակ Մալխասյան, Պողոս Չուբարյան, Արշակ Պարոնյան, Երվանդ Թադևոսյան, Աբգար Պապյան, Ալեքսանդր Տեր-Ազատյան և Իսահակ Խոջոյան⁴: Մեր կարծիքով, այստեղ բացակայում է Բոգդան Բալայանի անունը, որը դեռևս 1919 թ. մարտի վերջերից պառլամենտում ներկայացնում էր Նուխու և Արեշի գավառների հայ բնակչության շահերը:

Ենթադրվում էր, որ Ադրբեջանի պառլամենտում հայերի թիվը լինելու էր 21, իսկ նախարարները՝ 3: Նման որոշման համար նկատի էր առնվել նաև Ղարաբաղի ներկայացուցչությունը, բայց քանի որ Ղարաբաղը հրաժարվեց Ադրբեջանի իշխանությունը ճանաչելուց, այդ պատճառով հայ ներկայացուցիչների թիվը պակասեց: Թեև Ադրբեջանի պառլամենտի կազմը որոշ փոփոխություններ կրեց, բայց պատգամավորների ընդհանուր քանակը չգերազանցեց 100-ը: 1919 թ. վերջին 96 պատգամավորները բաժանված էին 11 ֆրակցիաների մեջ, որից երկուսը ներկայացնում էին հայերը: 337 կուսակցությունը պառլամենտում ներկայացված էր առանձին ֆրակցիայով և ուներ 6 պատգամավոր, Հայկական ֆրակցիան՝ 5: 1920 թ. գարնան դրությամբ Ադրբեջանի հայությունը պառլամենտում ներկայացված էր 11 պատգամավորով: Դրանցից Բաքուն՝ հինգ պատգամավորով, Գանձակը՝ 4, Նուխի-Արեշի շրջանը՝ 2: «Գանձակի գյուղացիությունը, Ղարաբաղը ամբողջովին մինչև այժմ դեռևս ներկայացուցչություն չեն տվել, թեև հիմնական «սահմանադրությամբ» այդ շրջանները իրավասու են որոշ թվով պատգամավորներ տալու»⁵, - գրում էր «Աշխատավոր»-ը 1920 թ. մարտի 27-ի համարում:

Պառլամենտում հայ պատգամավորները իբրև զեկուցողներ երբեք ամբիոն չէին բարձրանում. պատճառն այն էր, որ պառլամենտի պաշտոնական լեզուն թուրքերենն էր, և զեկուցումներն էլ անպայման թուրքերեն էին արվում, իսկ հայ պատգամավորներից ոչ ոք թուրքերենին չէր տիրապետում: Սակայն պառլամենտական բոլոր նշանավոր նիստերի ու կարևոր քննարկումների ժամանակ հայ պատգամավորները միշտ ունենում էին իրենց խոսքը, իրենց վերաբերմունքը: Նման դեպքերում թուլատրվում էր ռուսերենը⁶:

² Տե՛ս «Нагорный Карабах в 1918-1923 гг. (Сборник документов и материалов)». Ер., 1992, էջ 98:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 80, թ. 43, «Закавказское слово». Тифлис, 1919, 8 марта:

⁴ Տե՛ս **Յր. Աբրահամյան**, Մարտնչող Արցախը, 1917-2000 թթ., գիրք Ա, եր., 2003, էջ 147:

⁵ «Աշխատավոր», Թիֆլիս, 1920, 27 մարտի:

⁶ Տե՛ս նույն տեղը:

Լինելով հայության շահերի պաշտպանը Ադրբեջանի պառլամենտում՝ հայ պատգամավորներն իրենց գործունեության հենց սկզբից լծվեցին դժվարին ու պատասխանատու գործի: Նրանց գործունեությունն ընթանում էր մի քանի ուղղություններով, որոնցից կարևորներն էին՝ ադրբեջանական իշխանությունների ուշադրությունը հայության հոգսերի ու իրավագուրկ վիճակի վրա հրավիրելը, բռնությունների ու կոտորածների առաջն առնելը, հայ փախստականներին իրենց բնակավայրեր վերադարձնելը, հանրապետությունում տիրող հակահայկական քարոզչության դեմն առնելը, Ղարաբաղի հայ բնակչության արդարացի պայքարին սատարելը, Հայաստանի ու Ադրբեջանի միջև միջնորդական առաքելություն իրականացնելը, պառլամենտի ամբիոնը երկու ժողովուրդների միջև համերաշխության քարոզչության համար օգտագործելը և այլն: Այսպես, սկսած 1919 թ. մարտի 27-ից՝ պառլամենտի դաշնակցական ֆրակցիայի անունով սկսեցին ստացվել մեծ քանակությամբ բողոքներ՝ Բաքու քաղաքի տարբեր մասերում հայ քաղաքացիներին ծեծի ու բռնությունների ենթարկելու վերաբերյալ, իսկ ապրիլի 15-ից ինչպես պառլամենտական ֆրակցիան, այնպես էլ ինֆորմացիոն բյուրոն ստացան տեղեկություններ հայերի անհետացումների վերաբերյալ: Պառլամենտի ուշադրությունը հրավիրելով վերը նշված երևույթների վրա՝ դաշնակցական ֆրակցիան գտնում էր, որ միայն վճռական պայքարով է հնարավոր վերջ տալ անիշխանական գործողություններին, որի հիմքում ազգային վրեժխնդրությունն ու անհանդուրժողականությունն է, և միայն այդպիսի պայքարով է հնարավոր փարատել անվստահությունը, զուցե նաև անբարյացակամությունը երիտասարդ հանրապետության հանդեպ⁷:

Ադրբեջանում ծանր էր հատկապես Նուխու և Արեշի գավառների հայ բնակչության դրությունը: 1918 թ. ամռան սարսափներից հետո հայերը հաճախակի ենթարկվում էին բռնության, թալանի, գտնվում էին անօգնական վիճակում, մատնված էին սովի ու հիվանդության: Կտրված լինելով արտաքին աշխարհից՝ նրանք իրենց ծանր դրության մասին փորձում էին տեղեկացնել Ադրբեջանի պառլամենտի դաշնակցական ֆրակցիային՝ ակնկալելով, որ վերջինս իշխանությունների առջև հարց կհարուցի իրենց դրության վերաբերյալ ու միջոց կգտնի հայ բնակչությանն օգնելու համար: Դրությունն այնքան էր լրջացել, որ Վարդաշեն գյուղի բնակչությունը 1919 թ. ապրիլի 30-ին դիմեց Ադրբեջանի պառլամենտի դաշնակցական ֆրակցիային՝ խնդրելով իրենց ազատել կառավարության ճնշումներից և մինչև իսկ տեղափոխել ավելի ապահով տեղ, որովհետև վախենում էին դաշտային աշխատանքներ կատարել⁸:

Ադրբեջանի հայ փախստականների հարցը մշտապես հայ պատգամավորական խմբակցությունների մտահոգության առարկան էր: Ադրբեջանական իշխանությունների մեքենայությունների պատճառով փախստական դարձած տեղի հայ բնակչությունը, ենթարկվելով մուսավաթական ազգայնական տարրերի բռնություններին ու հալածանքներին, կարիք ու-

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 11, թ. 60:

⁸ Տե՛ս «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», Եր., 2003, էջ 309-310:

ներ օգնության ու փրկության, քանի որ նրանց մի զգալի մասը շարունակում էր գերի մնալ ադրբեջանցիների ձեռքին, ենթարկվում էր անմարդկային չարչարանքների ու անասելի զրկանքների: Փախստական հայերի դրությանը տեղում ծանոթանալու համար դաշնակցական ֆրակցիան, 1919 թ. հունիսի 8-ին նիստ գումարելով, որոշեց երկու պատգամավորների՝ հայ և մահմեդական, ուղարկել Նուխու և Արեշի գավառներ՝ նպատակ ունենալով պաշտոնապես ներկայացնելու իրական վիճակը: Պատգամավորները պետք է համապատասխան արձանագրություն կազմեին այն տեղերի մասին, որտեղ պահվում էին փախստական գերիները, և «միջոցներ ձեռնարկեին նրանց ազատելու համար»⁹: Նուխու և Արեշի գավառներ երկու պատգամավորների ուղևորության մասին ՀՀԴ պառլամենտական ֆրակցիան նամակով տեղեկացրեց Բաքվի Հայոց ազգային խորհրդին¹⁰: Ադրբեջանցիների մոտ պահվող հայ գերիներին ազատելու հարցը հետազայում ևս մնաց հայ պատգամավորների ուշադրության կենտրոնում, որոնք ամեն առիթ օգտագործում էին խնդիրը իշխանությունների առաջ արձարժելու համար: Այսպես, 1919 թ. սեպտեմբերի 25-ին Ադրբեջանի պառլամենտի հայկական ֆրակցիան հայ գերիներին ազատելու վերաբերյալ № 114 ուղերձով դիմեց Ադրբեջանի պառլամենտին¹¹ ինչպես նրա ուշադրությունը խնդրի վրա հրավիրելու, այնպես էլ հարցին լուծում տալու ակնկալիքով: Հայ պատգամավորները հաճախ միջնորդությամբ դիմում էին պառլամենտի նախագահին՝ Ադրբեջանից հայ փախստականների տեղափոխմանը աջակցելու խնդրով: Այսպես, 1919 թ. նոյեմբերի 13-ի համարում «Слово» թերթը, մեջ բերելով «Знамя труда»-ի հաղորդագրությունը, գրում էր. «Պառլամենտի անդամ Բալայանցը պառլամենտի նախագահի միջոցով միջնորդել է, որ Նուխի քաղաքից հեռանալ ցանկացող 65 հայերի պահակների հսկողությամբ հասցնեն Եվլախ կայարան»¹²: Սակայն, ինչպես մյուս դեպքերում, այնպես էլ հայ փախստականներին օգնելու խնդրում ոչ միշտ էր, որ հայ պատգամավորները հաջողություն էին ունենում: Նրանց քայլերը հաճախ հանդիպելով տեղի պաշտոնյաների անտարբեր վերաբերմունքին, մնում էին առկա վիճակում:

Հայ խորհրդարանականների գործունեության առանցքում առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում Ղարաբաղի խնդիրը, որի վերաբերյալ մեկ անգամ չէ, որ նրանք հարցումներով հանդես էին եկել կառավարության ու պառլամենտի առջև, բացատրություններ ու պարզաբանումներ պահանջել ադրբեջանական իշխանություններից, փորձել պաշտպանել Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները: Հայկական ֆրակցիան, արձագանքելով Ղարաբաղում ու նրա շուրջը կատարվող իրադարձություններին, հանդես էր գալիս պառլամենտական հանձնաժողովներ կազմելու առաջարկությամբ՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և համապատասխան եզրակացության գալու նպատակով, որին պետք է հետևեին իշխանությունների «համարժեք» գործողությունները: Այսպես, օրինակ՝ Ղայթալիշեն հայկա-

⁹ ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 78, թ. 23:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս «Слово». Тифлис, 1918, 8 ноября:

¹² Նույն տեղում, 1919, 13 ноября:

կան գյուղում ադրբեջանցիների իրականացրած կոտորածի փաստը մուսավաթական Ադրբեջանն ամեն կերպ փորձել է թաքցնել Ղարաբաղում կատարված ոճրագործությունները, և տեղում ընդհանուր վիճակի հետ ծանոթանալու համար Ղարաբաղ է ուղարկվել պառլամենտի անդամներից կազմված մի հանձնաժողով: Կարա բեյ Կալաբեկովի և Շաֆի բեկ Ռուստամբեկովի հետ միասին դեպքերը քննող հանձնաժողովի անդամներ էին նաև Պողոս Չուբարը (Չուբարյանը) և Իսահակ Խոջոյանը¹³:

Վերադառնալով Բաքու՝ Պողոս Չուբարը զեկույց ներկայացրեց Ադրբեջանի պառլամենտում և պնդեց, որ սպանդի հիմնական կազմակերպիչը եղել է Ղարաբաղում Ադրբեջանի նշանակած նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը: Սակայն պառլամենտը «Սուսավաթ» ֆրակցիայի առաջարկությամբ բանաձև ընդունեց, որում մասնավորապես նշվում էր, որ, լսելով կառավարության զեկույցն ու Ղարաբաղի դեպքերի վերաբերյալ բացատրությունը, գտնում է, որ «տեղական իշխանության և մասնավորապես ընդհանուր նահանգապետի գործունեության մեջ անօրինականության ոչ մի փաստ չկա: Ուստի խորհրդարանը հավանություն է տալիս այդ դեպքերին վերջ տալու համար կառավարության ձեռնարկած միջոցառումներին»¹⁴: Բերված օրինակն ապացույց է այն կողմնակալ վերաբերմունքի, որ պաշտոնական Բաքուն ցուցաբերում էր հայոց խնդիրների հանդեպ: Նրանց համար հիմնականը Ղարաբաղը ծնկի բերելն ու նրան ադրբեջանական իշխանություն պարտադրելն էր, և էական չէր, թե ինչ կմտածեին դրա վերաբերյալ պառլամենտի հայազգի գործիչները: Եթե նկատի ունենանք, որ հայերի համար անհնար էր ճանապարհորդել Բաքվից մինչև Ղարաբաղ և Գանձակ առանց կյանքը վտանգի ենթարկելու, ապա պարզ կդառնա, որ հայ պատգամավորները ստիպված էին գործել սահմանափակ միջավայրում և հայերի հանդեպ ադրբեջանցիների անհանդուրժողականության մթնոլորտում: Դա դրսևորվում էր հատկապես Ղարաբաղյան իրադարձությունների, առավելապես Չայաստանում մահմեդական խռովությունների ճնշման ժամանակ, երբ այդ հարցերը դառնում էին պառլամենտի քննարկման առարկա: Ամեն անգամ, երբ պառլամենտում քննարկվում էր Չայաստանում մահմեդականների նկատմամբ իրականացվող քաղաքականության կամ էլ Ղարաբաղի հայ բնակչության՝ ադրբեջանական իշխանությունը մերժելու վերաբերյալ հարցեր, կամ երբ Չայաստանի և հայ ժողովրդի հասցեին թշնամական ու վիրավորական հայտարարություններ էին արվում, հայկական պառլամենտական ֆրակցիան առաջինն էր, որ ենթարկվում էր հարձակումների: Այսպես, 1920 թ. գարնանը, երբ Ադրբեջանի գործակալները փորձում էին կաշառքի և քարոզչական միջոցներով մահմեդական փոքրամասնությանը գրգռել ՀՀ օրինական իշխանությունների դեմ, Ադրբեջանում հակահայկական մթնոլորտը շիկացնելու նպատակով սկսեցին կեղծ ու չափազանցված լուրեր տարածվել Կարսի մարզի Շորագյալի, Ջարուշատի և Չլդրի շրջաններում հայկական գործերի գործողությունների մասին¹⁵: Կարսի դեպքերի

¹³ Տե՛ս Արամայիս, Ղարաբաղի տագնապը, Եր., 1993, էջ 75:

¹⁴ Հր. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 147:

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 411, մաս 2, թ. 104:

կապակցությամբ մարտի 12-ին Ադրբեջանի խորհրդարանի հրավիրած արտակարգ նիստում տեղի ունեցած վիճաբանությունների ժամանակ բուլոր ելույթ ունեցողները առանց բացառության «անզուսպ հարձակումներ էին գործում Հայաստանի կառավարության և Դաշնակցության վրա»¹⁶: Ձգաստության հրավիրելու ՅՅԴ խմբակցության փորձերն առաջ բերեցին աննկարագրելի աղմուկ ու բողոք, պատգամավորներից Սաֆիքյուրդսկին անգամ առաջարկեց դաշնակցական պատգամավորներին հեռացնել պառլամենտից¹⁷: «Թեև գտնվեցին պատգամավորներ՝ ընկերվարական Աղամալի Օղլին և Ասադ Քարակը, որոնք բաց կերպով Կարսի դեպքերի մեջ անմիջականորեն մեղադրեցին կառավարությանը, հայտարարելով, որ եթե կառավարությունն անմեղ է, այն ժամանակ ինչացո՞ւ են այն միլիոնները, որոնք ուղարկվում են Հայաստան», - գրում է Ս. Վրացյանը¹⁸:

Հայ-ադրբեջանական լարված հարաբերություններն իրենց գագաթնակետին հասան 1920 թ. գարնանը: Ռազմական գործողություններ սկսելով Ղարաբաղում և հարակից շրջաններում՝ Ադրբեջանը որոշել էր վերջնականապես իր օգտին լուծել Ղարաբաղի հարցը՝ կանգ չառնելով ոչ մի միջոցի առջև: Այդ լարված օրերին Ադրբեջանի հայությունը գտնվում էր ամենօրյա կոտորածի վտանգի մեջ: Բայց նույնիսկ նման պայմաններում Ադրբեջանի պառլամենտի հայ ներկայացուցիչները շարունակում էին իշխանությունների ուշադրությունը հրավիրել հայության անվտանգության վրա՝ ամեն կերպ փորձելով կանխել նրանց գլխին կախված վտանգը: Նման մտահոգությամբ 1920 թ. ապրիլի 13-ին Ադրբեջանի պառլամենտի հայկական ֆրակցիան Հայոց ազգային խորհրդի հետ միասին հանդիպեց վարչապետ Ուսուբբեկովին. այդ հանդիպմանը հայերի խնդրանքով մասնակցեց նաև Խան-Խոյսկին: Զրույցի ընթացքում հայերը ներկայացրին լարված վիճակը՝ նշելով, որ հայերը Ադրբեջանում երաշխիք չունեն, թե վաղն իրենց հետ մի բան չի պատահի: Հանդիպման ընթացքում Ուսուբբեկովը խոստացավ կարգադրել անհապաղ դադարեցնելու զինված խմբերի հարձակումները Գանձակի գավառում: Որոշվում է նաև պառլամենտի անդամներից կազմված հանձնաժողով ուղարկել՝ վտանգված և կորուստներ կրած բնակչությանը օգնություն ցույց տալու համար¹⁹: Այդուհանդերձ, հայ պատգամավորներն անգոր էին մեղմելու հայության նկատմամբ ադրբեջանցիների ատելությունը, որոնք նշված շրջանում որոշել էին զենքի միջոցով հասնել Ղարաբաղի խնդրի լուծմանը՝ դրա ճանապարհին կոտորածի ենթարկելով Գանձակի ու նրա շրջակա գավառների հայությանը:

Ադրբեջանում մեկ տարվա ընթացքում տեղի ունեցած կառավարական երեք ճգնաժամերն արդյունք էին այն սուր քաղաքական պայքարի, որ ընթանում էր ինչպես պառլամենտի ներսում, այնպես էլ նրանից դուրս: Սոցիալ-տնտեսական դրության վատացման պայմաններում 1919 թ. հունվարին Ադրբեջանում սկսվեց երկարատև կառավարական ճգնաժամ. նույն ամսի 28-ին կայացած պառլամենտի նիստում «Իթթիհատ»-ի ֆրակցիան կա-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 392:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Տե՛ս «Слово». Тифлис, 1920, 17 апреля:

ռավարությանը մեղադրեց տնտեսական ճգնաժամի ու կոռուպցիայի դեմ պայքարելու անզորության մեջ, որին իրենց աջակցությունը հայտնեցին սոցիալիստները: Մտքերի փոխանակության ընթացքում կառավարությանն անվստահություն հայտնվեց: Ընդդիմության ճնշման տակ 1919 թ. փետրվարի 25-ին Խան-Խոյսկին ստիպված էր հրաժարական ներկայացնել²⁰:

Կառավարական ճգնաժամը Ադրբեջանում շարունակվեց մինչև մարտի կեսերը: Այդ ընթացքում «Մուսավաթ» կուսակցության պառլամենտական խմբակցությանը հաջողվեց ի թիվս այլ խմբակցությունների, դաշինքի մեջ ընդգրկել նաև հայկական և ռուս-սլավոնական ֆրակցիաներին: Ըստ այդմ` քննարկումներ էին տեղի ունենում նոր կառավարությունում նախարարական տեղեր զբաղեցնելու հարցի շուրջ: Մասնավորապես, սոցիալիստական բլոկը կառավարությունում պահանջում էր 6 տեղ, որոնցից 2-ը առաջարկում էր զիջել հայ սոցիալիստներին, մեկը` դաշնակցականի, մյուսը` սոցիալիստ-հեղափոխականի: Անդրադառնալով Ադրբեջանում ընթացող քաղաքական զարգացումներին` Բաքվում հաստատված ՀՀ նորանշանակ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանն իր օրագրային գրառումների մարտի 12-ի բաժնում գրել է. «Բանակցությունները դեռևս ավարտված չեն, բայց համոզմունք կա, որ դրանք կավարտվեն բարեհաջող և որ Խան-Խոյսկին նախագահի պորտֆելը չի պահպանի»²¹: 1919 թ. մարտին Խան-Խոյսկու կառավարությունը հրաժարական տվեց: Նոր կառավարության կազմը պառլամենտը հաստատեց 1919 թ. ապրիլի 14-ին²²: Թվով չորրորդ կառավարությունը գլխավորեց «Մուսավաթ» կուսակցության անդամ Ն. Ուսուբբեկովը: Նոր կառավարության մեջ հայերը ներկայացված էին երկու նախարարով:

Համաձայնելով մասնակցել Ադրբեջանի կառավարության աշխատանքներին` Ազգային խորհրդի նախագահությունը 1919 թ. հունվարի 31-ի նիստում աշխատանքի և խնամատարության նախարարի համար որպես թեկնածու ընտրեց Ա. Դաստակյանին, իսկ արդարադատության նախարարի համար` Խորեն Համասփյուռնին: Վերջինիս առաջադրման հարցում Բաքվի Հայոց ազգային խորհուրդը նկատի էր ունեցել այն հանգամանքը, որ անհրաժեշտ էր զանձակեցիներին ևս տեղ տալ կառավարության մեջ, քանի որ այդ հայաշատ շրջանը պառլամենտում ուներ 4 տեղ, և Գանձակի տեղական կարիքներին իրազեկ ներկայացուցչի մասնակցությունը կառավարության մեջ կարող էր միանգամայն նպատակահարմար և օգտակար լինել: Հաստատելով նախագահության առաջարկը` Բաքվի Հայոց ազգային խորհուրդն իր փետրվարի 1-ի նիստում Ա. Դաստակյանին թեկնածու ընտրեց աշխատանքի և խնամատարության միացյալ նախարարության (13 կողմ, 3 ձեռնպահ), իսկ Խ. Համասփյուռնին` արդարադատության նախարարության համար (12 կողմ, 5 ձեռնպահ): Ձեռնպահները գլխավորապես դաշնակցական ներկայացուցիչներն էին, որոնք ՀՀԿ կուսակցության Բաքվի Կենտրոնական կոմիտեի անունից հայտարարեցին, որ Կոմիտեն վճռել է «չմասնակցել նախարարության կազմի մեջ, այլ համաձայն է միայն մասնակցելու

²⁰ Տե՛ս «По следам Азербайджанской Демократической Республики». М., 2007, էջ 161:

²¹ ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 5, թ. 1:

²² Տե՛ս «История возникновения Азербайджанской Республики», Баку, 1998, էջ 24:

պառլամենտում»²³: Նրանք խնդրեցին, որ կառավարության համար Բաքվի դաշնակցականներից թեկնածուներ չառաջադրվեն: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը հարկ համարեց խորեն Համասփյուռի կարծիքն իմանալու համար հատուկ նամակ հղել նրան, որտեղ ի մասնավորի ասված էր. «Ի նկատի ունենալով այդ հայտարարությունը խորհուրդս որոշեց հայտնել Ձեզ, որ Դուք ընտրված էք թեկնածու արդարադատության նախարարության համար, ուստի խնդրում է Ձեզ շուտափույթ կերպով հայտնել հեռագրով արդյոք համաձայն էք, որ Ձեր թեկնածությունը հիշյալ նախարարական պաշտոնի համար առաջարկվի խորհուրդիս կողմից Ադրբեջանի կառավարության մինիստր-նախագահին: Որովհետև այդ պատասխանը խոստացել ենք տալ երկու-երեք օրից հետո՝ խնդրում ենք շտապեք մեզ պատասխանելու»²⁴:

Նկատենք, որ Ադրբեջանի կառավարության մեջ հայերի մասնակցության հարցը քննարկման կարևոր նյութ էր դարձել ինչպես հասարակական շրջանակների, այնպես էլ մամուլի համար: Մասնավորապես, Թիֆլիսում հրատարակվող «Մշակը», 1919 թ. փետրվարի 26-ի համարում անդրադառնալով խնդրին և հայտնելով, որ Ա. Դաստակյանը աշխատանքի միևնույն է, ընթերցողներին տեղեկացնում էր մինիստրական կազմի մեջ սպասվող փոփոխությունների մասին, որի ժամանակ Դաստակյանին հանձնվելու էր առևտրի և արդյունաբերության մինիստրությունը: Անդրադառնալով հայերին տրամադրված երկրորդ նախարարական պաշտոնին՝ թերթն այնուհետև տեղեկացնում էր, որ արդարադատության նախարարի պաշտոնի համար առաջադրվել է Գ. Մելիք-Դադայանի թեկնածությունը, որը լուրջ իրավաբանի համբավ ուներ²⁵: Փաստորեն, Խ. Համասփյուռից բացի առաջադրված է եղել նաև Գ. Մելիք-Դադայանի թեկնածությունը: Սակայն վերջինիս թեկնածությունը հանվել է, և մնացել է Խ. Համասփյուռինը:

Խան-խոյսկու կառավարության հրաժարականից հետո Ադրբեջանի պառլամենտը 1919 թ. ապրիլի 14-ին վերջապես հաստատեց կառավարության նոր կազմը՝ Նասիբ բեկ Ուսուբբեկովի նախագահությամբ: Չնայած շրջանառվող լուրերին, որ Ա. Դաստակյանը (անկուսակցական) զբաղեցնելու է աշխատանքի կամ առևտրի և արդյունաբերության նախարարի աթոռը, նրան հատկացվեց առողջապահության նախարարի պաշտոնը: Կառավարության մեջ երկրորդ հայ ներկայացուցիչը խորեն Համասփյուռն էր (ՀՅԴ), որը, փաստորեն, անպորտֆել նախարար էր:

Այսպիսով՝ ամիսներ տևած բանակցություններից հետո հայերը մտան Ադրբեջանի իշխանության բարձրագույն մարմիններ, որտեղ նրանց սպասում էր ծանր ու դժվարին աշխատանք Ադրբեջանի հակահայ քաղաքականության պայմաններում՝ պայքար հայ բնակչության իրավունքների ու ազգային արժանապատվության համար: Խնդիր չունենալով անդրադառնալու Ադրբեջանի կառավարությունում հայ նախարարների ծավալած ամբողջ գործունեությանը՝ նշենք միայն, որ նրանք իրենց պաշտոնավարմանը զու-

²³ «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում...», էջ 209-210:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Տե՛ս «Մշակ», 1919, 26 փետրվարի:

գահեռ հանդես էին գալիս հայության ոտնահարված շահերի և իրավունքների պաշտպանությամբ, հայության խնդիրները բարձրացնում կառավարության առջև՝ հանդիսանալով յուրովի կապող օղակ հայ բնակչության ու կառավարության միջև: Հայ նախարարները մշտապես կապի մեջ էին Բաքվի Հայոց ազգային խորհրդի, հայ հասարակական կազմակերպությունների հետ: Այսպես, օգտվելով հարմար պահից, որ ոստիկանական տեղամասերի աշխատակիցների գործունեությունը վերստուգելու համար պաշտոնյա էր նշանակվել Ադրբեջանի կառավարության կողմից, 1919 թ. հունիսի 31-ին էս. Համասփյուռը գրություն ուղարկեց Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահին՝ խնդրելով իրեն շտապ տեղեկացնել Ազգային խորհրդի ձեռքի տակ եղած բոլոր այն տեղեկությունների ու բողոքների մասին, որոնք վերաբերում էին հանրապետության սահմաններում հայերի նկատմամբ ոստիկանության աստիճանավորների իրականացրած անօրինական գործողություններին: «Շատ ցանկալի է ստանալ անօրինական ձերբակալությունների, ծեծի, բռնագրավումների և աղմինիստրացիայի անօրինական այլ գործողությունների վերաբերյալ դիմումների պատճենները: Նշված փաստաթղթերը, ստորագրված բողոքները և պատշաճ հավաստագրումները վերստուգող պաշտոնյայի համար նյութ կծառայեն ոստիկանության մեղավոր պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու համար»²⁶, - ասված էր էս. Համասփյուռի գրության մեջ: Գտնվելով իշխանության մեջ՝ հայ նախարարները միաժամանակ հանդես էին գալիս որպես հայկական շահերի արտահայտիչներ. կառավարությանն էին ներկայացնում հայությանը հուզող խնդիրները, պառլամենտի հայկական ֆրակցիայի հուշագրերը՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով Ղարաբաղի և Ջանգեզուրի ցավոտ հարցերը, Ադրբեջանի հայ փախստականների ճակատագիրը: Երբեմն նաև հանդես էին գալիս որպես ՀՀ բանագնացներ, բանակցություններ վարում սահմանային խնդիրների շուրջ, շոշափում Ադրբեջանի կառավարության տրամադրությունները, անգամ բացատրություններ պահանջում հայկական տարածքների դեմ ադրբեջանական ռազմական գործողությունների համար²⁷: Սակայն հայ նախարարները որքան էլ ցանկանում էին կարելին անել հայ բնակչության համար, այդուհանդերձ դա նրանց հիմնականում չէր հաջողվում: Ադրբեջանի հակահայ գործելակերպի պայմաններում դրա իրականացումը գործնականում հնարավոր չէր: Թերևս դրանով էր պայմանավորված Ադրբեջանի կառավարությանը անվստահություն հայտնելու հայերի ձգտումն ու Ն. Ուսուբեկովի նոր կաբինետին մասնակցելուց հրաժարվելը: Նոր կառավարության կաբինետին մասնակցելու վերաբերյալ Ն. Ուսուբեկովի առաջարկությունը քննարկման հարց դարձավ Բաքվի Հայոց ազգային խորհրդում: Մասնավորապես, 1919 թ. հոկտեմբերի 31-ին խնդրի վերաբերյալ ելույթ ունենալով՝ պառլամենտի անդամ Ա. Մալխասյանը հայերի մասնակցությունը կառավարությանը հնարավոր համարեց միայն որոշ պահանջների կատարման դեպքում: Դրանք էին՝ Ադրբեջանի հայությանը վարչական ճնշումներից և կամայականություններից ազատե-

²⁶ ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 46, թ. 2:

²⁷ Տե՛ս **Յու. Ղուլյան**, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թվականներ, Եր., 2009, էջ 274-275:

լու համար հայերին պաշտոններ տալ վարչակազմում, մասնավորապես հայկական շրջաններում ամբողջ վարչակազմը պետք է բաղկացած լիներ հայերից, Հայաստանի և Ադրբեջանի միջև ծագող վիճելի խնդիրները լուծել խաղաղ բանակցությունների և արբիտրաժի միջոցով, գերության մեջ գտնվող հայերին ազատել, 1918 թ. մարտյան դեպքերի²⁸ քննությունը դադարեցնել և կառավարական հանցավոր գործակալներին դատի ենթարկել:

Այդ պահանջների ընդունումը հայերի համար ուներ կենսական նշանակություն: Կառավարության կողմից այդ պահանջները կատարելու երաշխավորություն տալու պարագայում Ա. Մալխասյանը գտնում էր, որ կարելի է ընդունել Ուսուբբեկովի առաջարկը: «Հակառակ դեպքում մենք կհայտարարենք պառլամենտում, թե ինչու չկամեցանք մտնել կառավարության մեջ, թեև ցանկություն ունեինք օգտակար աշխատանք տանելու կառավարության մեջ»²⁹, - նշված էր Ա. Մալխասյանի ելույթում: Կառավարական շրջաններում քննարկվում էր պառլամենտի հայկական ֆրակցիայի ներկայացուցիչներին հանրապետությունում ստեղծագործ աշխատանքի մեջ ներգրավելու հարցը: Կառավարությունը ֆրակցիային առաջարկեց յուրացնել իշխող «Սուսավաթ» կուսակցության տեսակետը՝ խոստանալով նախարարական տեղերից մեկը: Այդ կապակցությամբ հայկական ֆրակցիայի և կառավարության միջև տեղի ունեցան բանակցություններ, որոնց ընթացքում հայկական ֆրակցիան, առաջարկին պատասխանելով, նախ ներկայացրեց հայ բնակչության դրությունը՝ նշելով, որ հայերն ընդգրկված չեն տեղական կառավարման մարմիններում, հայ ժողովուրդը գտնվում է անտանելի վիճակում, փախստականներին արգելվում է վերադառնալ իրենց տները: Այնուհետև առաջադրվեցին որոշ պայմաններ, որոնց իրականացման դեպքում միայն կարող էին մտնել կառավարության կազմի մեջ: Պայմաններից առաջինն այն էր, որ հայերից ընտրվեն ոստիկաններ³⁰. օրինակ՝ Գանձակում ոստիկանապետի տեղակալը լինի հայ, որի մասին նախկինում իշխանությունները խոստացել էին, հայերն ընդգրկվեն պետական հիմնարկներում, դատի տան հայերի նկատմամբ հանցանք գործածներին, ազատ արձակեն ադրբեջանցիների մոտ գտնվող հայ գերիներին, իշխանությունների օժանդակությամբ հայ գյուղացիները վերադառնան իրենց նախկին տեղերը, մամուլում դադարեցնեն հակահայկական քարոզչությունը, նոր պաշտոններ չտան այն անձանց, ովքեր հայերի դեմ հանցանք են գործել, հայերին տրվի նվազագույն մշակութային ազգային ինքնավարություն, երկու հանրապետությունների միջև հարցերը կարգավորեն միայն խաղաղ ճանապարհով, դադարեցվի մարտյան և սեպտեմբերյան³¹ դեպքերի հետագա քննությունը:

Գործող կառավարության հանդեպ պառլամենտի հայկական ֆրակցիան իր դիրքորոշումը հրապարակավ ներկայացրեց պառլամենտի նիստի

²⁸ 1918 թ. մարտի 17-20-ը Բաքվում մուսավաթականները կազմակերպեցին խռովություն՝ հրահրելով ազգամիջյան կոտորածներ:

²⁹ «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում...», էջ 420:

³⁰ Տե՛ս **Hovhannisian R.**, *The Republic of Armenia*, vol. 3, Berkeley- Los Angeles - London, 1996, էջ 190:

³¹ Խոսքը 1918 թ. սեպտեմբերի 15-17-ը Բաքվում թուրք-թաթարների կողմից հայերի նկատմամբ իրականացված կոտորածների մասին է, որին զոհ էին գնացել 30 հազար հայեր:

ընթացքում: Հանդես գալով բոլոր հայ պատգամավորների անունից՝ Ա. Մալխասյանը հայտարարեց, որ իրենք չեն կարող վստահություն հայտնել գործող կառավարությանը: Հայկական կողմին վրդովմունք էր պատճառել հռչակագրի այն մասը, ըստ որի՝ բնակչության մի մասն էր օգտվելու պետական կյանքի բոլոր իրավունքներից, իսկ մյուս մասն օգտվելու էր միայն փոխադարձության սկզբունքի հարցի լուծումից հետո³²: «Մենք ոչ մի դեպքում չենք կարող վստահություն հայտնել այն կառավարությանը, որը մեզ կախվածության մեջ է դնում այլ հանրապետության հետ համաձայնության գալուց: Մենք չենք կարող վստահել այդ կառավարությանը»³³, - ասված էր հայտարարության մեջ: «Ես հայտարարում եմ, որ աննորմալ վիճակ է, երբ մինչև հիմա՝ մինչև այս պահը Նուխու և Արեշի գավառներում ներքին գործերի նախարարությունը, չնայած մեր բազմաթիվ փորձերին, չկարողացավ ազատել գերության մեջ գտնվող մարդկանց, և նրանք մինչև հիմա գտնվում են նույն վիճակում: ...Հռչակագիր գրել, խոստանալ ամեն տեսակ հոյակապ հնարավորություններ, մասնավորապես մշակույթի ծաղկում, գրականության, թատրոնների և այլնի զարգացում, մինչդեռ Գանձակի նահանգում անձի գոյության և քաղաքացու կյանքը ապահովված չէ, որովհետև գործի գլուխ կանգնած է իր խնդիրները չհասկացող, իր կոչմանը չհամապատասխանող մարդ»³⁴: «Դուք չեք ցանկանում հաշվի նստել բնակչության ոչ ինտելեկտուալ, ոչ ֆիզիկական հետաքրքրությունների հետ, որը ոչ մի թշնամական վերաբերմունք չունի դեպի աղբեջանցի ժողովուրդը, այդպիսի պաշարով ճանապարհ ընկնել, կազմել կառավարություն, որպեսզի կառուցեք պետականություն, չեք կարող, քանի որ այդ ճանապարհով չեն պետականության կառուցմանն ընդառաջ գնում: Ահա այդ նկատառումներով մենք՝ հայ պատգամավորներս, ելնելով հայկական շահերի պաշտպանության և պետական շահի տեսակետից, հայտարարում ենք, որ նոր կառավարությանը չենք կարող վստահություն հայտնել»³⁵: Հայտարարությունը հայ պատգամավորների կողմից ընդունվեց ծափահարություններով:

Այսպիսով՝ հայերին նոր կառավարության մեջ ներգրավելու ուղղությամբ աղբեջանական կողմի քայլերը, հանդիպելով հայկական կողմի հիմնավոր պարզաբանումներին ու պատճառաբանություններին, արդյունք չտվեցին: Աղբեջանն իր հերթին մտադրություն չունեց փոխելու հայերի հանդեպ որդեգրած քաղաքականությունը: 1919 թ. դեկտեմբերի 22-ին պառլամենտի նիստում հայտարարվեց կառավարության նոր կազմը Նասիբ բեկ Ուսուբբեկովի նախագահությամբ, առանց հայերի մասնակցության³⁶:

1920 թ. ապրիլի 28-ին Աղբեջանը խորհրդայնացվեց, սակայն դրանից հայերի իրավական-քաղաքական դրությունը չփոխվեց: Ինչ վերաբերում է Աղբեջանի պառլամենտի հայ պատգամավորներին, ապա նրանք

³² Ծանոթություն. Հռչակագրով բնակչության մնացած մասի (նկատի է առնվում հայերին) քաղաքացիական իրավունքների ճանաչումը թողնվում էր Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումից հետո, եթե Հայաստանն էլ ճանաչեր իր տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների (մահմեդականների) իրավունքները:

³³ ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 11, ք. 134:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 11, ք. 40:

ադրբեջանցի պատգամավորների նման ենթարկվեցին հետապնդումների ու ձերբակալությունների: Հետապնդվում էին հատկապես ՀՅԴ կուսակցության անդամները, որոնց մեծ մասը բանտարկվեց Բայիլովի բանտում: Բանտարկված դաշնակցականների թվում էին նաև Ադրբեջանի նախկին պառլամենտի անդամներ Աբգար Պապյանը, Խորեն Համասփյուռը և Արշակ Մախասյանը³⁷:

Այսպիսով, Ադրբեջանի իշխանության մարմիններում իր մասնակցությունը բերելով՝ հայ բնակչությունը փորձեց մասնակից դառնալ Ադրբեջանի բազմազգ պետության կայացմանը, դրան զուգահեռ՝ նաև պաշտպանը հայ իրավազուրկ բնակչության շահերի: Սակայն ամբողջության մեջ վերցրած դա նրան չհաջողվեց: Պատճառը հայ-ադրբեջանական լարված հարաբերություններն ու հայերի նկատմամբ Ադրբեջանի անհանդուրժողական քաղաքականությունն էր:

ЮРИК ГУЛЯН – *Участие армян в органах власти Азербайджана (февраль 1919–апрель 1920 гг.)*. – После переговоров, длившихся несколько месяцев, армяне вошли в высшие органы власти Азербайджана, где их ждала трудная повседневная работа. Делегировав своих представителей в органы власти, армянское население попыталось интегрироваться в многонациональное Азербайджанское государство и защитить с их помощью свои интересы. Однако в целом эта попытка не удалась. Причиной тому послужили конфликтная ситуация между азербайджанцами и армянами и непримиримая политика правительства республики по отношению к армянам.

YURIK GHULYAN – *The Participation of Armenians in the Governing Bodies of Azerbaijan (February 1919 - April 1920)*. – After several months' negotiations Armenians entered the highest governing bodies of Azerbaijan, where hard and difficult work awaited them. Taking part in the governing bodies of Azerbaijan, Armenian population tried hard to participate in the formation of the multinational state of Azerbaijan. At the same time it became the defender of Armenian population deprived of any rights. However, on the whole, they failed. The reason for it was the relations between Armenian and Azerbaijani people as well as the intolerable policy of Azerbaijan towards Armenians.

³⁷ Տե՛ս «Յառաջ», Եր., 1920, հուլիսի 6: